ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 1996 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 13 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հոկտեմբերի 24-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» 1996 թվականի դեկտեմբերի 28-ի համաձայնագրում եւ նրան կից արձանագրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ

կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 09.02.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» 1996 թվականի դեկտեմբերի 28-ի համաձայնագրում եւ նրան կից արձանագրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրությունն ստորագրվել է 2011 թվականի հոկտեմբերի 24-ին Մոսկվայում՝ 1996 թվականի դեկտեմբերի 28-ի Համաձայնագրում եւ նրան կից Արձանագրությունում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նպատակով՝ երկու երկրներում տեղի ունեցած իրավական եւ տնտեսական փոփոխություններին համապատասխան:
2. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ է 1998 թվականի մարտի 17-ից:
3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- աջակցել մյուս կողմին իրենց վերապահված հարկային պարտավորությունների գանձման գործում,
- մյուս կողմի ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում օրացուցային տարվա ընթացքում 183 օրվանից ոչ պակաս գտնվելու կամ նախորդ օրացուցային տարում սկսված եւ ընթացիկ օրացուցային տարում անընդմեջ 183 օրվանից ոչ պակաս ժամանակահատվածում իրականացվող վարձու աշխատանքից ստացվող աշխատա-

վարձը եւ նման այլ վարձատրությունները հարկել այն եղանակով եւ դրույքաչափերով, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների համար,

- մյուս կողմի ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետությունում մինչեւ 183 օր լրանալն աշխատանքները դադարեցնելու դեպքում, կատարել վճարման ենթակա հարկի գումարի վերահաշվարկ եւ նրանց նկատմամբ կիրառել այնպիսի դրույքաչափեր, որոնք գործում են ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ, եւ տույժեր ու տուգանքներ չկիրառել նման դեպքերում,
- կիրառել ապահովման միջոցներ այնպիսի հարկային պարտավորությունների նկատմամբ, որոնց գանձման համար մյուս պետության օրենսդրությունը նախատեսում է ապահովման միջոցների կիրառում,
- իրավասու մարմինների միջոցով փոխանակել ցանկացած տեղեկատվություն, որը կարող է համարվել էական Համաձայնագրի խնդիրների իրականացման համար,
- մյուս կողմի տեղեկատվության հարցման դեպքում ձեռնարկել իր տրամադրության տակ գտնվող ցանկացած միջոց՝ ստանալու պահանջված տեղեկատվությունը նույնիսկ այն դեպքում, եթե մյուս կողմն իր սեփական հարկման նպատակների համար այդպիսի տեղեկության կարիք չունի,
- չմերժել տեղեկատվության տրամադրումը միայն այն պատճառով, որ այդ տեղեկատվությունը գտնվում է բանկի, այլ վարկային կազմակերպության, անվանական տնօրինողի, գործակալի կամ վստահված անձի տնօրինության ներքո, կամ այդ տեղեկատվությունը վերաբերում է որեւէ անձի տնօրինման իրավունքին:

4. Արձանագրությամբ սահմանված են նաեւ այն ուժի մեջ մտնելու կարգը եւ գործողության ժամկետը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հոկտեմբերի 24-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» 1996 թվականի

դեկտեմբերի 28-ի համաձայնագրում եւ նրան կից արձանագրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 մարտի 2012 թվականի
ՍԴՈ- 1013